ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԱ-09.06.01.28-56

ք. Երևան «15» «դեկտեմբեր» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի քարտուղար Դ. Համբարյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Երևանի Ստեփան Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ս. Գալստյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 5-ի «Սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման արդյունքում ատեստավորում անցած և հավելավճար ստացող ուսուցիչների մասին» թիվ 1687-Ա հրամանը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն պարտավորվում է ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի 09.06.01.«28. Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը» ծրագրի իրականացման համար սույն պայմանագրի 2.1. կետում նշված միջոցները հատկացնել Կատարողին, իսկ Կատարողը ստանձնում պարտավորություն 2021 թվականի ընթացքում իրականացնել թվով 3 կամավոր ատեստավորված մանկավարժի հավելավճարի տրամադրումը՝ (այսուհետև՝ Աշխատանք):

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 436910 (չորս հարյուր երեսունվեց հազար ինը հարյուր տաս) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն համաձայն Կատարողի կողմից ներկայացված հայտի կատարում է վճարում անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.Պատվիրատուն ցանկացած ժամանակ իրավունք ունի ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.2. Պատվիրատուն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

3.4. Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.5. Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.6. Կատարողի կողմից ստացված և սահմանված ժամկետներում չօգտագործված միջոցները վերադարձվում է Պատվիրատուին:

3.7. Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.8 Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ ներկայացնել հաշվետվություններ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանի և ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող կազմակերպություններին առընչվող այլ իրավական ակտերի:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պատվիրատունսույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Սույն պայմանագրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3. Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, անբաժանելի մաս կազմող հավելվածից /1 էջ/, և հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կատարող**
Երևանի քաղաքապետարան	«Երևանի Ստեփան Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Արգիշտի 1	ք. Երևան, Հր.Քոչարի 13
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038818	Հ/Հ 900018004102
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 00031542
Աշխատակազմի քարտուղար	Տնօրեն
.....Դ.Համբարյան (ստորագրություն)	.....Ս.Գալստյան (ստորագրություն)
Կ.տ	Կ.տ

Հավելված N 1
«15»«դեկտեմբեր»2021թ. կնքված
թիվ ԿԱ-09.06.01.28-56 պայմանագրի

Ատեստավորված մանկավարժներին հավելավճարի հատկացման ցուցակ

Հ/Հ	Անուն, Ազգանուն Հայրանուն	Հրամանի ամիս, ամսաթիվը և համարը	Առարկայի անվանում	Ընդամենը գումարը /ՀՀ դրամ/
1	Հայրապետյան Նելլի Նորայրի	05.11.2021թ. N 1687-Ա	Հայոց լեզու	136962
2	Ազատյան Անի Արշակի	05.11.2021թ. N 1687-Ա	Հայոց լեզու	120593
3	Ալտունյան Սվետա Ռաֆիկի	05.11.2021թ. N 1687-Ա	Մաթեմատիկա	179355
ԸՆԴԱՄԵՆԸ				**436910**

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011038818
ՀՎՀՀ 02593108

Աշխատակազմի քարտուղար

.....Ղ. Համբարյան
(ստորագրություն)
Կ.տ

Կատարող
«Երևանի Ստեփան Զորյանի անվան թիվ 56 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
ք. Երևան, Հր.Քոչարի 13
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900018004102
ՀՎՀՀ 00031542

Տնօրեն

..... Ս.Գալստյան.
(ստորագրություն)
Կ.տ